



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 129-Ա/2

26.02.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N131-Ն որոշումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետերին, Կրթության ազգային ինստիտուտի, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեններին՝

1) ապահովել ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրից բխող ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցառումների (այսուհետ՝ ծրագիր) կատարումը՝ համաձայն N1 հավելվածի,

2) ապահովել ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016 թվականի գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացումը՝ համաձայն N2 հավելվածի,

3) յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 2-օրյա ժամկետում ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն ներկայացնել ամենամսյա ծրագրի միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման ընթացքի մասին տեղեկատվություն,

4) ըստ ստորև նշված ժամկետների՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի N803-Ն որոշմամբ հաստատված ձևաչափով (համաձայն N3 հավելվածի), ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն ներկայացնել ծրագրի միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման արդյունքների մասին հաշվետվություն.

ա) առաջին ժամկետ՝ 01.04.2016թ.,

բ) երկրորդ ժամկետ՝ 01.07.2016թ.,

գ) երրորդ ժամկետ՝ 01.10.2016թ.,

դ) չորրորդ ժամկետ՝ 26.12.2016թ.:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչությանը (պետ՝ Ռ.Ստեփանյան).

1) յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 3-օրյա ժամկետում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարին ներկայացնելու նպատակով, ամփոփել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ստորաբաժանումներից ստացված ամենամսյա տեղեկատվությունն ու պատրաստել տեղեկանք՝ ծրագրի միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման ընթացքի մասին,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում՝ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու նպատակով, պատրաստել տեղեկանք՝ տվյալ եռամսյակում ծրագրի միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման արդյունքների մասին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարում եմ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի պարտականությունները կատարող Նաիրի Հարությունյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ



Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

(Քաղվածք ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N131-Ն որոշման N1 հավելվածից)

Հ/հ	Միջոցառման անվանումը (համարակալումն ըստ ՀՀ կառավարության 14.01.2016թ. N131-Ն որոշման N1 հավելվածի)	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Ժամկետը
1.	71. «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից օգտվող երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրացում	Հանրակրթության վարչություն	փետրվարի 3-րդ տասնօրյակ
2.	72. «Տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների բնականոն գործունեության ապահովում՝ արդյունավետ ծառայությունների մատուցմամբ	Հանրակրթության վարչություն	փետրվարի 3-րդ տասնօրյակ
3.	73. «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության միասնական դաշտ	Հանրակրթության վարչություն	մարտի 1-ին տասնօրյակ
4.	74. «Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մանկավարժահոգեբանական ծառայությունների կազմակերպման երկրորդ և երրորդ մակարդակների գործունեության կանոնակարգում	Հանրակրթության վարչություն	մայիսի 2-րդ տասնօրյակ
5.	75. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N332-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ԵԲԿՏ-ի տարածքում գործող որակավորումների շրջանակին համապատասխանեցված ուսումնառության վերջնարդյունքներ	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն	մայիսի 2-րդ տասնօրյակ
6.	76. «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բարձրագույն կրթության օրենսդրական դաշտի բարելավում	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն	նոյեմբերի 2-րդ տասնօրյակ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Քաղվածք ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N131-Ն որոշման N2 հավելվածից)

Հ/հ	Գերակա խնդիրները <i>(համարակարգում ըստ ՀՀ կառավարության 14.01.2016թ. N131-Ն որոշման N2 հավելվածի)</i>	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Պատասխանատու
1	2	3	4
1.	44. Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում	- շուրջ 30 նախակրթարանի հիմնում և նախադպրոցական կրթությունում ընդգրկվածության մեծացում՝ շուրջ 600 երեխա	Հանրակրթության վարչություն <i>Համակարարող՝</i> <i>«Կրթական ծրագրերի կնտրոն» ԾԻԳ</i>
2.	45. Հանրակրթության որակի և արդյունավետության բարձրացում	- 12 ավագ դպրոցի հիմնանորոգման մեկնարկ - կրթության գերազանցության ազգային ծրագրի ներդրում - «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում ՀՀ Շիրակի մարզի՝ 163, ՀՀ Արմավիրի մարզի՝ 118, Երևանի 100 ուսումնական հաստատությունների 5-րդ դասարաններում - տեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցության հիմունքներ և միկրո-էլեկտրոնիկա առարկաների ներդրում 10 ավագ դպրոցում - ազգային փոքրամասնությունների դպրոցների համար 4 անուն դասագրքի վերահրատարակում (եզդիերեն) - հանրակրթական դպրոցների եզդիերենի՝ շուրջ 20 և քրդերենի՝ շուրջ 16 ուսուցչի վերապատրաստում	Հանրակրթության վարչություն <i>Համակարարող՝</i> <i>«Կրթական ծրագրերի կնտրոն» ԾԻԳ,</i> <i>Կրթության ազգային ինստիտուտ</i>
3.	46. Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացում և եվրոպական մասնագիտական կրթական տարածքին ինտեգրում	- Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) պլանավորման ու կատարողականի կառավարման կարողությունների հզորացման նպատակով ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների շուրջ 145 տնօրենների, փոխտնօրենների, վարչական աշխատողների վերապատրաստման իրականացում	Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն <i>Համակարարող՝</i> <i>Կրթության ազգային ինստիտուտ</i>
4.	47. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացում՝ Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործմամբ	- առնվազն երկու բարձրագույն ուսումնական հաստատության անցում կազմակերպաիրավական նոր ձևի - առնվազն երկու բարձրագույն ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում - 6 բարձրագույն ուսումնական հաստատությունում նորարարական ծրագրերի իրականացում	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն <i>Համակարարող՝</i> <i>«Կրթական ծրագրերի կնտրոն» ԾԻԳ</i>

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

(Քաղվածք ՀՀ վարչապետի 2009 թ. սեպտեմբերի 24-ի N803-Ն որոշման հավելվածի N4 ձևից)

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
			

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը	Կարծիք
1	2	3	4	5
			- - - ...	
			- - - ...	
	...		- - - ...	

***Ծանոթագրություն**

- «Պատասխանատու մարմինը» սյունակի տողում պետք է նշել ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման անվանումը
- «Ծրագրի կետը» սյունակի համապատասխան տողերում պետք է նշել ՀՀ կառավարության 14.01.2016թ. N131-Ն որոշմամբ հաստատված միջոցառման և գերակա խնդրի համապատասխան կետը
- «Գերակա խնդիրները» սյունակի համապատասխան տողերում անհրաժեշտ է նշել ծրագրի գերակա խնդիրները
- «Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը» սյունակի համապատասխան տողերում անհրաժեշտ է նշել **տվյալ եռամսյակում** ծրագրի գերակա խնդրի լուծմանն ուղղությամբ կատարված աշխատանքների նկարագրությունը (ընթացքը)
- «Միջոցառումների անվանումը» սյունակի համապատասխան տողերում անհրաժեշտ է նշել ծրագրի միջոցառումները
- «Միջոցառման կատարման արդյունքները» սյունակի համապատասխան տողերում անհրաժեշտ է նշել միջոցառման կատարման վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդունման համարը, ամիսը և ամսաթիվը կամ ՀՀ կառավարության նիստի արձանագրության ամիսը և ամսաթիվը, համարը և կետը
- «Կարծիք» սյունակը լրացվում է միայն ՀՀ կառավարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից, որը գնահատում է միջոցառման կամ գերակա խնդրի կատարման ընթացքի մասին ներկայացված տեղեկատվությունը»: